13941

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«26» 11 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0214-21

Ձեռնարկողը՝ ***«Ռուբիզոն» ՍՊԸ***
Արագածոտնի մարզ, Կաքավաձոր 5 փ. 1 նրբ. փ. 3

Գործունեությունը՝ ***Օթևանի փուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0214-21

< 26 **>** 11 **2021թ.**

Օթևանի տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ռուբիզոն» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Օթևան համայնք

Ներածական մաս. Օթևանի տուֆերի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Օթևան գյուղի վարչական տարածքում և զբաղեցնում է 6.8հա մակերեսով տարածք, Օթևան գյուղից (1.0կմ), հեռավորության վրա: Մոտակա բնակավայրերն են Կաքավաձոր,Ագարակավան, Կարմրաշեն, Պարտիզակ գյուղերը և Թալին քաղաքը (15կմ): Արդյունահանման նպատակով հայցվող տարածքը ներկայացված է ըստ նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությանը կամ հողատեսքը արոտավայր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրի պաշարները հաստատվել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 2037-Ա հրամանով 2020 թվականի փետրվարի 1-ի դրությամբ, «ՀՀ Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների վերաբերյալ՝ 01.02.2020 թվականի դրությամբ պաշարների հաշվարկմամբ», A կարգով, 907.8 հազ.մ^3 քանակով, ուղիղ կտրված պատքարի 47.3% միջին ելքով:

Հաստատված պաշարները դիտարկել որպես ուղիղ կտրված պատքարի (ԳՕՍՏ 4001-2013 «Պատքար լեռնային ապարներից) արդյունահանման, իսկ դրա արդյունքում առաջացող

թափոնները՝ թեթև լցանյութերի (ГОUS 22263-76 «Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից») արտադրության հումք: Շահագործման ժամկետը 20 տարի:
Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով հետևյալն են.

X_1 –4472032	Y_1 - 8419725
X_2 –4472166	Y_2- 8419682
X_3–4472221	Y_3 - 8419657
X_4 –4472352	Y_4 - 8419598
X_5 –4472496	Y_5 - 8419598
X_6–4472641	Y_6 - 8419604
X_7 –4472641	Y_7- 8419495
X_8–4472497	Y_8 - 8419487
X_9–4472344	Y_9 - 8419452
X_{10}–4472307	Y_{10} - 8419467
X_{11} –4472328	Y_{11} - 8419520
X_{12} –4472204	Y_{12}- 8419609
X_{13}–4472184	Y_{13} - 8419544
X_{14} –4471993	Y_{14}- 8419649

Նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի պարամետրերն են՝
-բացահանքի առավելագույն երկարությունը – 660մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը – 150մ,
- բացահանքի առավելագույն խորությունը (ամենաբարձր և ամենացածր նիշերի միջև եղած տարբերությունը) – 15.9մ,
- բացահանքի օտարման մակերեսը – 6.8հա,
- տուֆերի հաշվեկշռային պաշարների քանակը – 907.8հազ.մ^3,
- տուֆերի կորզվող պաշարները – 818000մ^3,
- մակաբացման ապարների ծավալը – 100.09հազ.մ^3,
- բացահանքում տարեկան արդյունահանվող պաշարներն ըստ առաջադրանքի կազմում են 40900մ^3 տուֆային զանգված, իսկ տարեկան մարվող պաշարը՝ 45390մ^3:

Բացահանքի շահագործման ժամանակ նախագծային կորուստներն որոշվում են ըստ 2 խմբերի:
-Ըստ լեռնատեխնիկական պայմանների կախված օգտակար հաստաշերտի տեղադրման եզրագծի բարդության աստիճանից և անկման անկյունից: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում: Այդ կորուստները կազմում են՝(907800 - 818000) : 907800 x 100 = 9.89%:
-Շահագործողական կորուստներ: Տվյալ դեպքում դրանք կանխորոշվում են արդյունահանման տեխնոլոգիայից և ընդունվում են 4550մ^3(0.5%):

Ելնելով հանքավայրի բնակլիմայական և լեռնատեխնիկական պայմաններից, նախատեսվում է հանույթային աշխատանքներն իրականացնել շուրջ տարի, տարեկան 260 աշխատանքային օր, 8 ժամ տևողությամբ աշխատանքային ռեժիմով:

Հողաբուսաշերտը չի գերազանցում 0.2-0.3մ և ներկայացված է խոտաբույսերի արմատներ պարունակող շականակագույն հողերով և կավաավազային առաջացումներով: Ծածկող ապարները բացահանքում կազմում են 100090մ^3, որից 23964մ^3 փուխր բեկորային առաջացումներ են, իսկ 76126 մ^3-ը ջարդոտված հողմնահարված տուֆեր՝ փուշտա:

Մակաբացման ապարներն սկզբնական շրջանում բուլդոզերով տեղափոխվում են բացահանքից դուրս դեպի արևելյան հատված:

Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական միակողմ, ցածրաստիճանային մշակման համակարգով: Հանույթային աշխատանքներն իրականացվում են CMP-026 մակնիշի քարհատ մեքենայի միջոցով:

Արդյունահանման տեղամասում ստացված ուղիղ կտրված քարերի բարձումն սպառողի տրանսպորտային միջոցների մեջ կատարվում է ձեռքով:

Ուղիղ կտրվածքի քարերի արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները, 21651.0մ^3/տարի կամ 83.27մ^3/հերթ ծավալով աշխատանքային հանքաստիճաններում բուլդոզերով տեղափոխվում են 5-10մ հեռավորության վրա և կուտակվում:

Այնուհետև կուտակված թափոնները L-34 անվավոր բարձիչով բարձվում են 6.6մ^3 թափքի տարողությամբ KaMA3-5511 մակնիշի ավտոինքնաթափի մեջ, տեղափոխվում և պահեստավորվում են բացահանքից դուրս նրա հյուսիսային և հարավային մասում ձևավորվող ժամանակավոր N3 լցակույտ, հետագայում մարված հորիզոնների վրա ներքին լցակույտ կատարելու համար: Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները դրանք արտադրական թափոններն են՝ ընդհանուր՝ 433020մ^3, և մակաբացման ապարներ՝ 100090մ^3:

Մակաբացման ապարներն սկզբնական շրջանում բուլդոզերով տեղափոխվում են դեպի բացահանքից դուրս նրա արևելյան հատվածը, ձևավորելով ժամանակավոր N1 (փուխր բեկորային առաջացումներ) լցակույտ և N2 (ջարդոտված հողմնահարված տուֆեր) լցակույտ, հետագայում մարված /արդյունահանված/ հորիզոնների վրա ներքին լցակույտ կատարելու համար:

Շահագործման 9-րդ տարվանից սկսած նրա 2052.9մ, 2050.8, 2046.6, 2044.5, 2042.4մ և 2040.3մ բարձրության հորիզոնների շահագործման ավարտից հետո կատարվում է ներքին լցակույտաառաջացում: Սկզբում տվյալ հորիզոնի արտադրական թափոնները լցվում են արդեն շահագործված հորիզոնի վրա միջինը 7.5մ բարձրությամբ և հարթեցվում: Հետագայում ներքին լցակույտ է տեղափոխվում ինչպես շահագործման ընթացքում գոյացած արտադրական թափոններն, այնպես էլ N1 և N2 լցակույտ տարված մակաբացման ապարները և շահագործմանը զուգահեռ իրականացվում է փռում՝ միջինը 2.0մ բարձրությամբ և հարթեցում:

Քարհանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է ЗИЛ-130 մակնիշի ջրցան-լվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ջրի ցիստեռնով:

Բացահանքում կատարվող բոլոր լեռնային աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել պահպանելով «Հանքավայրերը բաց եղանակով մշակելու անվտանգության միասնական կանոնների» և «Հանքավայրերի տեխնիկական շահագործման կանոնների» պահանջները:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու է բացահանքի 2038.2մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց: Բացահանքի հատակի հարթեցումը կատարվում է բուլդոզերի օգնությամբ:

Հարթեցումը կկատարվի բացահանքի հատակի ողջ մակերեսով՝ 4,6հա, ինչպես նաև արտադրական հրապարակը 275մ^2: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման համար նախատեսված է 985.4 հազ. դր. ամբողջ տարածքի համար:

Նախնական խոշորացված հաշվարկներով մշտադիտարկումների իրականացման համար կպահանջվի շուրջ 50000 ՀՀ դրամ/տարի: Հաշվի առնելով հանքի շահագործման տևողությունը, գումարած փակումից հետո 5 տարի շարունակվող մշտադիտարկումները, ստացվում է որ մշտադիտարկումների ընդհանուր գումարը կազմում է 1250000 ՀՀ դրամ:

Հանքարդյունահանման աշխատանքների համար հայցվող տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Բուն հանքավայրի տարածքը ներառված չէ նաև բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա և ապրելավայրեր:

Բացահանքի աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր, ուղղված մթնոլորտային օդի, հողային, ջրային, ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում

-նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,

-օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման, կամ երկրորդական վերամշակման համար,

-հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն,

-կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,

-արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,

-փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում է հատուկ ծառայության ուժերով, իսկ ընդերքօգտագործման իրավունքն ստանալուց հետո կնքվելու է պայմանագիր:

-խախտված տարածքների ռեկուլտիվացիա,

-աղմուկի նվազեցման նպատակով նախատեսվում է մեքենաները սարքավորվել ձայնախլացուցիչներով,

- նախատեսվում են կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

-լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամսական մեկ անգամ հաճախականությամբ,

-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

Պատճառաբանական մաս. Արագածոտնի մարզի Օթևանի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

-Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

-Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և

դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ռուբիզոն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Օթևանի տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան